ՀՈՒՆՎԱՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հունվար ամսվա անցուդարձի մասին:

ԿԱՆԱՉ ԹԻՄ

Հունվարի 14-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ում տեղի ունեցավ «Կանաչ թիմ» նախագծի մասնակիցների առաջին հանդիպումը: Հանդիպման ընթացքում նրանք ծանոթացան շրջակա միջավայրի աղտոտվածության հետ, և թե ինչպես կարելի է այն մաքուր պահել, հրաժարվելով մի շարք վնասակար, սակայն առօրյայում հաճախ գործածվող նյութերից, իսկ «GyumRiver» թիմը կիսվեց իր ունեցած փորձով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հունվարի 26-ին գումարվեց Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի Ընդհանուր Ժողովի նիստը:

Ընդհանուր 57 անդամից քվեարկությանը մասնակցել է 43 անդամ, որից 19-ը քվեարկել է առցանց:

ԵՆԿ նախագահ է վերընտրվել
Արթուր Նաջարյանը

..ԵՆԿ Վերստուգիչ է ընտրվել
Հովհաննես Հարությունյանը

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՄԵՆՔ «ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ԵԹԵՐՈՒՄ

Հանրային հեռուստաընկերության «Առավոտ Լուսո» ծրագրի հյուրն էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանը, ով խոսեց կազմակերպության ընդհանուր գործունեության և առաջիկա ծրագրերի մասին:

ԴԻՏԵԼ ՏԵՍԱՆՅՈՒԹԸ

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Ուրախ ենք տեղեկացնելու, որ Վրաստանի Ռուսթավի քաղաքում մեկնարկեց «Do-It-Yourself» ծրագրի առաջին դասընթացը՝ ատելության խոսքին հակադիր և այլընտրանքային պատմություններիթեմայով:

Ուրախ ենք տեղեկացնելու «Երիտասարդների քաղաք՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով երկարաժամկետ ծրագրի մեկնարկի մասին, որն իրականացնում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ն՝ վրացական «Դրոնի» երիտասարդական ասոցիացիայի , ուկրաինական «Եվրոպական նախաձեռնություններիԿենտրոն» ՀԿ-ի, չեխական «Գլոբ» ՀԿ-ի և խորվաթական «ԼԱԳ Վալլիս Կոլապիս» կազմակերպությունների հետ համագործակցությամբ
Հունվարի 16-20-ը Չեխիայի Օլոմուց քաղաքում տեղի ունեցավ գործընկերների առաջին աշխատանքային հանդիպումը: Ամենահետաքրքիր հնարավորությունները առջևումեն. սպասեք մեր նորություններին
Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միությանԷրազմուս+ ծրագրի շրջանակներում:

Հունվարի 31-ից Իսպանիայի Լորկա քաղաքում մեկնարկեց «Cartoon Youthwork» խորագրով Էրազմուս+ միջազգային դասընթացը:

Չեխիայի Բրնո քաղաքում փետրվարի 2-ին մեկնարկեց «CauCAN-Counter and Alternative Narratives For Human Rights in the Caucasus» երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի ներքո միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրը՝ մարդու իրավունքների և հակադիր ու այլընտրանքային պատմություններիթեմայով:

Ինչպես նաև այս ամիս ունեցել ենք երկու ծրագրային հնարավորություն՝

- Էրազմուս+ միջազգային դասընթաց ձեռնարկատիրական աջակցման թեմայով, Իսպանիայի Ռասկաֆրիա քաղաքում,

- Էրազմուս+ միջազգային դասընթաց միջսերնդային փոխանակման թեմայով, Իսպանիայի Սանտանդեր քաղաքում:

ՀՈՒՆՎԱՐԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

«Երիտասարդների տունը» աշխատանքային տարին սկսեց ուսուցողական, կրթական ծրագրերի մեկնարկով:

Կենտրոնում կազմակերպվող կրթական ակումբները, աշխատարաններն և միջոցառումները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր պատանու գիտելիքներ ձեռք բերել և բազմակողմանի զարգանալ:
Շարունակվում են անգլերենի, բանավեճի, գրքասերների, պարի և յոգայի ակումբները, մեկնարկել է ռուսերենի ակումբը:
Հունվարի 25-ին «Երիտասարդների տանը» հյուրընկալվեցին Վանաձորից եկած մի խումբ ակտիվ երիտասարդներ, ովքեր ուսումնաճանաչողական այցի շրջանակներում ծանոթացան կենտրոնի գործունեությանն ու իրականացվող ծառայություններին, ապա կենտրոնի սաների հետ կազմակերպեցին իրենց ժամանցը «Երիտասարդների տան» տարածքում:
Կենտրոնում հպարտությամբ նշվեց Հայոց բանակի կազմավորման 28 ամյակը, քանզի կենտրոնի շրջանավարտ տղաներից շատերն արդեն զինծառայողներ են:
«Երիտասարդների տան» թիմը շարունակում է իրականացնել տեղեկատվական հանդիպումներ Գյումրու դպրոցներում և ուսումնական հաստատություններում՝ ներկայացնելով կենտրոնում իրականացվող ծառայություններն ու առաջարկվող հնարավորությունները:
Արթուր Նաջարյանը Հանրային հեռուստաընկերության «Առավոտ Լուսո» ծրագրի շրջանակներում ներկայացրեց նաև «Երիտասարդների տան» գործունեության, հետագա ծրագրերի ու պատանիներին առաջարկվող հնարավորությունների մասին:
Կենտրոնի սաների կողմից առաջիկայում սպասվում են հետաքրքիր միջոցառումներ, որոնց կարող եք ծանոթանալ հետևելով մեր էջերին:

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ